

#### 5.4. 2011 թվականի հունվար ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, հունվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր 2-3 աստիճանով, ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիի մարզերում՝ 1 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 0.5-2 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ ցածր 0.5-2 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ բարձր 2-4 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +7 +8°C, Արարատյան դաշտավայրում՝ +4°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +5 +7°C, ՀՀ Լոռու մարզում՝ +3 +6°C, Սյունիքի նախալեռներում՝ +2 +4°C, լեռնային շրջաններում՝ -2 +1°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունվարի 26-28-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +16 +18°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +12+16°C, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Լոռու մարզում՝ +8 +13°C, Արագածոտնի նախալեռներում՝ +5 +9°C, Սյունիքի նախալեռներում՝ +3 +8°C (ք.Գորիսում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ +12°C), լեռնային շրջաններում՝ +4 +6°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 0°C):

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է -9 -11°C, Արագածոտնի նախալեռներում, ՀՀ Լոռու և Սյունիքի մարզերում՝ -4 -9°C, Արարատյան դաշտավայրում՝ -3 -5°C, Սյունիքի հովիտներում և Տավուշի ցածրադիր գոտում՝ -2 +1°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունվարի 13-18-ին: Լեռնային շրջաններում գրանցվել է -13 -18°C (ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ -20°C, Ծաղկահովիտ գյուղում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ -21°C), Սյունիքի նախալեռներում՝ -10 -12°C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -19°C), ՀՀ Լոռու մարզում՝ -9 -10°C (ք.Տաշիրում՝ -20°C), Արարատյան դաշտավայրում՝ -6 -10°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -5 -9°C, Սյունիքի հովիտներում՝ -1 -3°C (ք.Կասպանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -8°C):

Հունվար ամսվա ընթացքում տեղումների քանակը եղել է նորմայից բարձր: ՀՀ Շիրակի և Գեղարքունիքի մարզերում այն կազմել է նորմայի 62-150%-ը, ՀՀ Լոռու մարզում՝ 120-230%, ՀՀ Տավուշի մարզում, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի նախալեռներում՝ 120-150%, Արագածոտնի նախալեռներում՝ 125-140%, Սյունիքի հովիտներում՝ 80-100%: Հունվարի 1-ին, 8-ին (ցերեկը), 9-10-ին, 11-ին, 28-31-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ, 29-31-ին (գիշերները) լեռնային և նախալեռնային շրջաններում՝ առավելապես ձյան տեսքով: Ձյան ծածկույթի բարձրությունը հունվարի 31-ի դրությամբ Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ) կազմել է 81 սմ, ք.Ջրագդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 57 սմ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 55 սմ, Անանուն լեռնանցքում (ՀՀ Արարատի մարզ)՝ 45 սմ, Աշոցք գյուղում՝ 42 սմ, Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 38 սմ, մնացած շրջաններում՝ 5-20 սմ: Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայել է:

Հունվարի 1-12-ին Արարատյան դաշտավայրում և առանձին այլ հովտային շրջաններում, 28-31-ին առանձին նախալեռնային շրջաններում դիտվել է մառախուղ 50-500 մ

տեսանելիությամբ: Հունվարի 24-26-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 9-14 մ/վրկ, պոռթկումները՝ 16-22 մ/վրկ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 90-130%-ը:

Սևանա լճի մակարդակը հունվար ամսվա ընթացքում բարձրացել է 4 սմ-ով և հունվարի 31-ի դրությամբ պետք է կազմեր 1899.74 մ: Սակայն ՀՀ ԱՎԾ-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության (Հայպետհիդրոմետ) կողմից 18.02.2011թ. թիվ 06-54 գրությամբ տեղեկացվել է, որ հիմք ընդունելով «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Հայպետհիդրոմետին տրամադրված ՀՀ գեոդեզիական բարձրունքային ցանցի կետերը և 2008թ. նոր կատալոգների նիշերը, 2010թ. հունիս ամսին ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի կողմից ստեղծված մասնագիտական աշխատանքային խմբի կողմից լճային հիդրոլոգիական դիտակետերում իրականացված նիվելիրացման և համեմատության արդյունքները, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 20.12.2010թ. թիվ Ե/2.1/5410-10 գրությունը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 16.07.2009թ. թիվ 791-Ն որոշման 2-րդ կետի պահանջներով, Հայպետհիդրոմետը Սևանա լճի մակարդակի 20 սմ տարբերությունը գրոյացնելու նպատակով 2011թ. հունվարի 1-ից Սևանա լճի մակարդակի նիշը համապատասխանեցրել է «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրատարակված կատալոգների տվյալներին: Հետևաբար, Սևանա լճի մակարդակի նիշը հունվարի 1-ի դրությամբ ընդունվում է 1899.90 մ, իսկ հունվարի 31-ի դրությամբ՝ 1899.94 մ: